

վարեին. եւ զբերդս ամենայն թագաւորին Յայոց կալան, եւ լցեալ բազում ամբարաւք՝ բերդակալս թողուին: 35 Ամնուին եւ զմեծ քաղաքն գերուանդաշատ, եւ խաղացուցանեին անտի երդս քսան հազար Յայ, եւ երդս երեսուն հազար Յրեայ. եւ զքաղաքն ի հիմանց տապալեալ բրեալ յատակէին: 36 Ապա առնուին եւ զքաղաքն Բագրեանդայ Չարեհաւան, եւ խաղացուցանեին անտի հինգ հազար երդ Յայ, եւ ութ հազար երդ Յրեայ. եւ զքաղաքն ի հիմանց տապալէին յատակէին: 37 Ամնուին եւ զքաղաքն մեծ Չարիշատ՝ որ էր ի գաւառին յԱղոյիովտի, չորեքտասան հազար երդ Յրեայ, եւ տասն հազար երդ Յայս. եւ զնա ի հիմանց քանդեալ ապականէին: 38 Առին եւ զամուր քաղաքն Վան, որ է ի գաւառին Տոգբայ. եւ հրծիգ արարեալ, քակէին զհիմունսս Նորա. եւ խաղացուցանեին անտի երդս հինգ հազար Յայ, եւ ութ եւ տասն հազար երդս Յրեայս:

39 Չայս ամենայն բազմութիւն Յրեից, զոր գերեցին տարան յերկրէն Յայոց, ածեալ էր յերկրէն պաղեստինացոց մեծի թագաւորին Յայոց Տիգրանայ ի ժամանակին՝ յորժամ գերեաց Նա եւ ած ի Յայս զքահանայապետն Յրեից զՀիւրկանդոս զառաջին ժամանակաւ: 40 Եւ Էած մեծ արքայն Տիգրան զամենայն զիրեութիւնն զայն՝ բնակեցոյց ի քաղաքսն Յայոց յիւրում դարուն ի ժամանակին: 41 Իսկ յայսմ ժամանակի աւերեցին զքաղաքսն, եւ գերեցին զբնակեալսն անդ. եւ զամենայն երկիրն Յայոց եւ զամենայն գաւառն ընդ Նմին գերեալ, խաղացուցեալ¹ եւ զայլ գերութիւնս գաւառաց գաւառաց, կողմանց կողմանց, փորի փորի, զաշխարհի աշխարհի, ածին ժողովեցին ի քաղաքն Նախճաւան. զի անդ էր զաւրաժողով իւրեանց զաւրացն: 42 Ապա առին եւ զնա քանդեցին. անտի երդս Յայս երկուս հազարս, եւ Յրեայ երդս վեշտասան հազարս անտի խաղացուցին զնացուցին ամենայն գերութեամբն հանդերձ: 43 Եւ անդէն յերկիրն Յայոց ոստիկանս թողին եւ վերակացուս, ի ծառայութիւն մատնել² զմնացորդս երկրին. եւ ինքեանք զտիկինն Փառանծեմ առեալ, հանդերձ գանձիւքն եւ բազմութեամբ գերեալսն յերկիրն Պարսից խաղացուցանէին. եւ զնացեալք երթային տանէին հասուցանէին յերկիրն Պարսից առ Շապուհ արքայն Պարսից:

44 Եւ եղեւ իբրեւ չոգան տարան զտիկինն Փառանծեմ յերկիրն Պարսից, եւ զայլ ամենայն գերութիւնն Յայոց եւ զգանձսն կալան առաջի թագաւորին եւ զտիկինն Փառանծեմ³, շնորի մեծ ունէր թագաւորն Պարսից իւրոց զաւրավարացն: 45 Եւ իբրեւ կամեցաւ թագաւորն Պարսից Շապուհ թշնամանս առնել ազգին աշխարհին Յայոց եւ թագաւորութեանն, ետ հրաման ժողովել

1 *Յերիս օրինակս*՝ խաղացեալ

2 *Չորս օրինակս*՝ մտանել

3 *Օրինակ մի չունի*՝ զտիկինն Փառանծեմ